կած էին Ներքին գործոց Նախարարութեան դիւանում, ուղարկուեցան արտասահմանի թեմերին։

Օքսֆորդում գումարուած կրօնների միջազգային կոնգրեսը դիմել էր Մ. Աթոռի հոգեւոր Ճեմարանի վարչութեան և խնդրել իւր ներկայացուցիչը ուղարկել մասնակցելու ժողովին։ Մանկավարժական ժողովը միաձայն ընտրել էր այդ նպատակի համար աստուածաբանութեան դասատու Տ. Երուանդ վարդապետին։ Բայց վերջինս Մ. Աթոռի նիւթական սղութեան պատճառով չկարողանալով իրաւունք ստանալ Տ. Տեղակալից, սեպտ. 1-ին հեռագրով չնորհաւորեց ժողովի բացումը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ տեղ տալ սոյն երկտողս «Արարատ»ի առաջիկայ համարում։

Պարբերական մամուլում յաճախ լոյս են տեսնում լուրեր, թէ Կաթուղիկոսական պատգամաւորների ընտրութիւնների ծանուցողական հրովարտակները դեռ չեն ստացուել արտասահմանեան հայ թեմերում, և դորանում մեղադրում են Ամենապատիւ Տեղակալին, Էջմիածնի Սինոդին և Միաբանութեանը։

Սինոդի յանձնարարութեամբ գաղում եմ գործից և յայտնում եմ ի գիտութիւն ընթերցողների հետեւեալ պաշտօնական տեղեկութիւնները, որոնք պարզելու են հրովարտակների մինչև այժմ չստանալու պատճառը արտասահմանեան հայ թեմերում։

Պոլսոյ Էնեայի 1119 և 1120 յոդ. համաձայն պատրաստելով և տպագրել տալով ի Տէր հանգուցեալ Մկրտիչ I կաթուղիկոսի մահուան մասին և նոր կաթուղիկոսի ընտրութեան մասին ծանուցողական հրովարտակներ, Սինոդը ուղարկում է ռուսահայ թեմերի Առաջնորդների

անունով ուղղած հրովարտակները անմիջապէս իրենց՝ անցեալ տարուայ դեկտեմբերի 8-ին, իսկ այն հրովարտակները, որոնք ուղղած էին արտասահմանի հայոց թեմերին, Սինոդը ուղարկում է առանձին ցուցակով և գրութեամբ նոյն դեկտեմբերի 10-ին Կովկասի փոխարքայի Դիւանատունը, խնդրելով կարգադրել, որ տաճկահայոց թեմերի հրովարտակները ուղարկուեն Կ. Պոլսի հայոց Պատրիարքին, յանձնելու ըստ պատկանելոյն, իսկ Ատրպատականի և Պարսկա-Հնդկաստանի թեմերի հրովարտակները՝ յանձնել թեմերի առաջնորդներին Թեհրանի Ռուսաց Դեսպանութեան միջոցով։

Այդ մասին Սինոդը նոյն թուին առանձին առանձին գրութիւններով անմիջապէս յայտնում է Պոլսի և Երուսաղէմի Պատրիարքներին, Կիլիկիոյ կաթուղիկոսին, Աղթամարայ կաթուղիկոսական Տեղապահին, Պարսկա-Հընդկաստանի և Ատրպատականի Առաջնորդներին։

Անցնում է մօտաւորապէս 2 ամիս. Սինոդը տեղեկանալով լրագրական լուրերից և Պատրիարքի մի գրութիւնից, որ հրովարտակները տակաւին չեն ստացուել արտասահմանեան թեմերումը՝ նոյն տարուայ մարտի 5 գրութեամբ խնդրում է Փոխարքայի Դիւանատանը յայտնել՝ թէ ինչ կարգադրութիւն է արուել այդ առթիւ. Դիւանատունը պատասխանում է Սինոդին, թէ հրովարտակները ուղարուկած են Ներքին Գործոց Նախարարին Յունվարի 31-ին № 2685 գրութեամբ։ Սինոդը իսկոյն, մարտի 24-ին, № 725 գրութեամբ, խնդրում է Օտար Դաւանութիւնների Հորգևոր գործերի Դեպարտամենտին կարգադրել որքան կարելի է շուտով հասցնել հրովարտակները ում հարկն է և տեղեկութիւն տալ Սինոդին։ Մինչ այդ կրկին Պոլսի Պատրիարքը և Ատրպատականի Առաջնորդը գրում են, որ դեռ այդ թղթերը չեն ստացուել. Սինոդը նորից է գրում թուղթ Դեպարտամենտին, 9 ապրիլի № 958, խնդրելով նորա շուտափոյթ տնօրէնութիւնը։ Ստանալով մի կողմից ոչ մի պատասխան Դեպարտամենտից, իսկ միւս կողմից Պատրիարքի նորանոր

գրութիւններից հաւաստիանալով, որ հրավարտակները դեռ Պետերբուրգում են, Սինոդը նախ հեռագրում է Դեպարտամենտին, մայիսի 19 և Յունիսի 18, և ապա դիմում է Ներքին Գործոց Նախարարին մանրամասն գրութեամբ, Յուլիսի 7-ին № 1818, խնդրելով ի նկատի ունենալ ընտրութեան ժամանակի մօտենալը (30 հոկտեմբերի) և կարդալով, որ հրավարտակները անյապաղ ուղարկուին ըստ պատկանելոյն, որի մասին և տեղեկութիւն տալ Սինոդին։ Ստանալով պատասխան եւ Նախարարից և կամենալով օգտուել Փոխարքայի Պետերբուրգում լինելուց՝ Սինոդը օգոստոսի 6-ին 2019 գրութեամբ միջնորդութիւն է յարուցանում դէպի կոմսը՝ խնդրել Նախարարից շտապեցնել հրավարտակների ուղարկելը. այդ իւր գրութեան միտքը Սինոդը կրկնում է հեռագրով Փոխարքայի անունով այս սեպտեմբերի 3-ին, սակայն մինչև այժմ Սինոդի այդ բոլոր դիմումները մնում են անպատասխան։

Ի Դէպ, ի պատասխան լրագրական այն լուրերի, որ իբր Սինոդը չէ մտածում ուղարկել հրավարտակներ և Եւրոպայի և Ամերիկայի նորահաստատ հայ թեմերը, պէտք է ասել, որ իւր ժամանակին, դեռ դեկտեմբերի 7-ին, Սինոդը № 2714 գրութեամբ յայտնում է Փոխարքային՝ թէ այդ երկու թեմը թէև արդարև չկային միւս թեմերի շարքում նախորդ կաթուղիկոսական ընդրութիւնների ժամանակ, բայց կազմուած և հաստատուած են ի Տէր հանգուցեալ կաթուղիկոսի յատուկ կարգադրութեամբ. իրենց Առաջնորդներով, ուստի և Սինոդը ենթադրում է, թէ պէտք է և նոցա ուղարկել հրավարտակ, այդ պատճառով էլ խնդրում է Փոխարքայից տեղեկացնել՝ թէ չէ՞ տեսնում որ և է արգելք այդ առթիւ։ Սինոդի գրութիւնը Փոխարքան յանձնում է Նախարարութեանը. Դեպարտամենտը յունվարի 20-ի գրութեամբ խնդրում է Սինոդից լրացուցիչ տեղեկութիւններ այդ թեմերի շրջանի, հաստատման ժամանակի, ծխականների թուի մասին և այլն. տեղեկութիւնները հաղորդում են փետրուարի 25-ի № 416 գրութեամբ, իսկ մայիսի 23-ի և Յուլիսի 7-ի

գրութիւններով Սինոդը խնդրում է Դեպարտամէնտից և Ներքին Գործոց Նախարարից շտապեցնել այս հարցի վճիռը. սակայն Սինոդը և այս առթիւ չէ ստացել մինչև այժմ քաղաքական բարձր իշխանութիւնից որ և է ցուցում։

Յ. Գ. Հենց այս րոպէիս Ամենապատիւ Տեղակալը ստացաւ Կովկասի Փոխարքայից, Նովոսիլցովօ կալուածքից, հեռագիր, որով կոմսը յայտնում է, թէ ծանուցողական հրովարտակները սեպտեմբերի 11-ին ուղարկուեցան Արտաքին գործերի Նախարարին (արտասահմանեան հայ) թեմերը ուղարկելու դեսպանութիւնների միջոցով։

12 սեպտեմբերի 1908 ամի
Ի ս. Էջմիածին։

Էջմիածնի Սինոդի գործավար **Յ. Մուսեղեան**։